

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ

Ի 3-ն սեպտ. Սինոդն լուեալ զյայտարարութիւն Վանական Կառավարութեան ի 1 ամսոյս թ. 371, որ վասն ապօրինաբար գրաւման այգեստեղեաց ի ձեռն Օշականցւոց, հրամայեաց՝—վասն կազմելոյ արձանագրութիւնս գրաւեալ այգեստեղեաց և տնատեղեաց ի ձեռն բնակչաց Օշական գեղջ խնգրել ի գաւառապետէն Էջմիածնի կարգել ատենաւոր մի, ծանուցանելով զկարգմանէ նորին Սինոդին, և պատուիրել Վանական Կառավարութեան կարգել ներկայացուցիչ ի կողմանէ Մայր Աթոռոյ զմին յանդամոց իւրոց և զկալաչափ Օշականայ և Մատաբայի զպ. Արսէնն Տ. Պողոսեան, պատուիրելով նոցա աւարտել զգործն մինչ ց 1 առաջիկայ հոկտ. և զկազմեալ արձանագրութիւնս առաջի առնել ի տնօրէնութիւն Սինոդին. Հ. 721.

Ի 12-ն սեպտ. Սինոդն լուեալ զկոնդակ Նորին Սրբութեան յ 8 սեպտեմբերի տարւոյ թ. 1400, որ ունի զայս օրինակ. «Ցանկացեալ Մեր զթողուլ զվանօրայս Մեր առանց վանահարց և զմիաբանս Մայր Աթոռոյ առանց պաշտամանց կամ եղև Մեզ առնել զյետագայ փոփոխութիւնս և պատուիրել Սինոդիդ ընդ փոյթ ի կատար ածել. կարգել զՏ. Ղևոնդ եպիսկոպոսն նախագահ վանական կառավա-

բութեան, թողլով զՏ. Խոսրով վարդապետն անդամ կառավարութեանն և հարկաժողով Վաղարշապատ գեղջ Մայր Աթոռոյ, զՏ. Ներսէս վարդապետն Տ. Միքայէլեան անդամ և գանձապահ կառավարութեան և հիւրընկալ հիւրատան Մայր Աթոռոյ, զՏ. Լևոն վարդապետն Փսերեան տեսուչ տպարանի Մայր Աթոռոյ ի տեղի Տ. Երուանդ վարդապետի, զոր կարգեցաք ուսուցիչ ճեմարանի, զՏ. Երեմիա վարդապետն ժամանակաւոր փոխանորդ Հին–Նախիջևանի, զՏ. Ուխտանէս վարդապետն Ս. Թովմայի Առաքելոյ վանուց Ագուլեաց, զՏ. Արիստակէս վարդապետն Զուլոյեան միաբան վանուցն Ս. Կարապետի Երնջակայ ըստ խնդրոյ վանահայր Կիւրեղ վարդապետի ի 20–օգոստոսի անցելոյ ամի, զՏ. Անտոն վարդ. վանահայր Հառիջոյ վանուց ի տեղի Արիստակէս վարդապետի, զՏ. Նիկողայոս վարդապետն Տ. Աւետիքեան վանահայր Ս. Ստեփանոսի վանուց Սաղիանու, զՏ. Հմայեակ վարդապետն Տ. Սարգսեան անդամ Կոնսիստորիային Երևանայ և կառավարիչ կալուածոց Մայր Աթոռոյ, որ յԵրևան. զՏ. Հմայեակ վարդ. Արշարունի առաքել ի վանս Ս. Խաչի Խրիմու, նշանակելով նմա առ ամիսն զ 15 ռ. ի հանդերձագին յարդեանց վանուցն բաց ի աննդենէ և ի բնակարանէ, զՏ. Եսայի վարդապետն ի վանս Գեղարդայ, նշանակելով նոյնպէս զ 15 ռուբլի առ ամիսն ի հանդերձագին յարդեանց վանուցն բաց ի աննդենէ և ի բնակարանէ։ Պատուիրեմք Սինոդիդ տնօրինել, զի տուչութիւն ռոճկաց նորոգ պաշտօնէից լիցի յօրէ ելանելոյ հրամանի դորին» — հրամայեաց ի կատար ածել զիմաստ կոնդակի Նորին Սրբութեան։—Հ. 744.

Ѳ 12-ն սեպտ. Սինոդն հրամայեաց մերժել զխնդիր Ժողովրդեանն Ալիղուլի գեղջ Շուշուայ դաւառի, որ վասն բառնալոյ ի Սահակ քահանայէ Ավիեանց զեղեալ ի վերայ Նորին եռամսեայ ապաշխարանս, զորմէ և տալ գիտել խնդրարկու ժողովրդեան ի ձեռն կոնսիստորիային Ղարաբաղի, պատուիրելով նմին ի կատար ածել զհրաման Սինոդին ի 10 անցելոյ օգոստոսի թ. 1646։ Հ. 747.

Ի 14-ն սեպտ. Սինոդն անհրաժեշտ համարելով զնորոգութիւն տանեաց Մայր–Տաճարի Ս. Էջմիածնի, հրամայեաց պատուիրել Վանական Կառավարութեան անյապաղ առնել զնորոգութիւն տանեացն ըստ յայտարարութեան Լուսաբարապետի, ծախելով յայդ պէտս զնախատեսեալ 166 ռ. գումարն արտաքոյ նախահաշուոյ և պատուիրել գանձապահի Սինոդի տալ արտաքոյ նախահաշուոյ Վանական Կառավարութեան Մայր Աթոռոյ զմի հարիւր վաթսուն և վեց ռուբլիս։ Հ. 751.

Ի 14-ն սեպտ. Սինոդն հրամայեաց թողուլ զանտառ վանուցն Ճալէթու ընդ իշխանութեամբ վանահօր վանուցն Տ. Սահակ վարդապետի, պատուիրելով նմա յերկուս նուագս ի տարին ի ձեռն փոխանորդի վիճակին Նուխւոյ մատուցանել Սինոդիս զհաշիւ մտից և ծախուց արդեանց վանուցն։ Հ. 755.

Ի 14-ն սեպտ. Սինոդն ի նկատի առեալ, զի Եղիշէ վարդապետն Ահարոնեանց չունի ի ձեռին ապահովագիր ինչ վասն յանձման Նորին Սրբութեան երկու հազար վաթսուն և չորս ռուբլեաց և 77 կոպէկաց, ուստի և հրամայեաց պատուիրել նմա անշուշտ առաջի առնել Սինոդիս զյիշեալ գումարն։ Թ. 758.

Ի 28-ն սեպտ. Սինոդն հրամայեաց շրջաբերական հրամանաւ խստիւ պատուէր հրամանի տալ առաջնորդաց Հայոց թէ անձամբ և թէ ի ձեռն նոցին ստորադրեալ վարչութեանց առ 1-ն յունուարի յառաջիկայ 1908 ամի ժողովելով զամենայն ապառիկս՝ պատկանեալս Մ. Աթոռոյս, հետզհետէ մատուցանել Սինոդիս, ազդ առնելով, զի ի դէպս զանցառութեան ունին անկանել ընդ ծանու պատասխանատուութեամբ ըստ օրինի։ Անկախ զայսմանէ առաջի առնել Սինոդիս զմանրամասն ցուցակ ամենատեսակ ապառկաց, մնացելոց մինչ ցայժմ։ Հ. 782.

Ի 1-ն հոկտ. Սինոդն հրամայեաց, ունելով ի նկատի, զի գրեանք հանգուցեալ Արիստակէս Արքեպիսկոպոսի են

մեծաւ մասամբ մասնագիտականք, զորս անհրաժեշտ է ունել ի կենդրոնական մատենադարանի Մ. Աթոռոյս, ուստի մերժել զմիջնորդութիւն Կոնսիստորիային Աստրախանի, որ վասն յատկացուցանելոյ զմատենադարան հանգուցելոյն թեմական դպրանոցի հայոց Աստրախանի։ Զայսմանէ տալ տեղեկութիւն հոգաբարձութեան յիշեալ դպրանոցին ի ձեռն Կոնսիստորիային Աստրախանի։ Եւ պատուիրել վանական կառավարութեան Մ. Աթոռոյ զամենայն գրեան հանգուցեալ Արիստակէս Արքեպիսկոպոսի յանձնել ի մատենադարան Մ. Աթոռոյ պատշաճ ցուցակաւ, զոր և առաջի առնել Սինոդիս։ Հ. 786.

Ամուսնալուծութիւնք

Ի 3-ն սեպտ. Սինոդն հաստատելով զեղրակացութիւն Կոնսիստորիային Երևանայ, հրամայեաց վաւերական համարել զպսակ Մեհրուոյ Մկրտչեան ընդ Մկրտչի Օգոյեան, բնակչի Ոնդամալ գեղջ, ենթարկելով զկինն մի ամսեայ եկեղեցական ապաշխարանաց վասն ինքնագլուխ ամուսնանալոյ և նախ քան զպսակն ապօրինաբար կենակցելոյ, և տալ իրաւունս նախկին առն նորա Սարգսի Յովհաննիսեանց մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 719.

Ի նմին թուի Սինոդն համեմատ եզրակացութեան Կոնսիստորիային Ղարաբաղի, հրամայեաց լուծանել զպսակ բնակչուհւոյ Շուշի քաղաքի Ովսաննայի Յակոմբեան ընդ առն նորա Իսահակայ Բայանդուրեանց առ անհաւատարմութեան վերջնոյս, տալով իրաւունս կնոջն մտանելոյ ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 720.

Ի նմին թուի Սինոդն համեմատ եզրակացութեանն Կոնսիստորիային Ղարաբաղի, հրամայեաց լուծանել բնակչի Գետաթաղ գեղջ, Զանգեզուր գաւառի, Աղաջանայ Օհանեանց ընդ կնոջն Բէգումայ Մանասեան ի պատճառ ան-

դունելոյ վերջնոյս զմահմեդականութիւն, տալով առն իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 723.

Ի նմին թուի Սինոդն համեմատ եղբակցութեան Կոնսիստորիային Երևանայ, հրամայեաց լուծանել զպսակ բնակչի Ղարղավանք գեղջ, Էջմիածին գաւառի Գրիգորի Մարտիրոսեան ընդ Սալբուոյ Օսկոյեան, տալով առն իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 724.

Ի 5-ն սեպտ. Սինոդն հաստատելով զեղբակցութիւն Կոնսիստորիային Ղարաբաղի, հրամայեաց լուծանել զպսակ բնակչի Ջավարապատ գեղջ Նուխուոյ գաւառի Սիմէոնի Սիմէոնեանց ընդ Եկատերինեայ Տէր Մելքիսեդեկեան, տալով կնոջն իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 727.

Ի 7-ն սեպտ. Սինոդն առեալ ի նկատ, զի բնակչուհի Ղարասուբազար քաղաքի Հռիփսիմէն Եաղուբեանց վարակեալ է յառնէ իւրմէ սիֆիլիս ախտիւ, որպէս խոստովանի զայդ այրն Գէորգ Եաղուբեան, ուստի համարելով զայրն յանցաւոր յամուսնական ուխտի, հրամայեաց լուծանել զպսակ Եաղուբեանց ամուսնոց, տալով Հռիփսիմէ կնոջն իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 729.

Ի 12-ն սեպտ. Սինոդն ճանաչելով զՄիքայէլ քահանայն Տէր Ստեփանոսեանց Զոհրաբլու գեղջ Երևան գաւառի յանցաւոր վասն կատարելոյ զպսակ 12 ամեայ Շամամի Աւետիսեան բնակչուհւոյ նոյն գեղջ, հրամայեաց յանձնել զնա ի դատ մարմնաւոր իշխանութեան ի ձեռն Պրոկուրորի Նահանգական դատարանի Երևանայ, կարճելով զգործ լուծման պսակի յիշեալ Շամամի ընդ Պետրոսի Ալեքսանեանց առ մահու վերջնոյս։ Հ. 740.

Ի 14-ն սեպտ. Սինոդն հաստատելով զեղբակցութիւն Կոնսիստորիային Հայոց Վրաստանի, հրամայեաց լուծանել զպսակ բնակչուհւոյ Տփխիս քաղաքի Եփեմիայի

Սօսինեան Սարգսեանց ընդ Գէորգայ Սարգսեանց, տալով կնոջն իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 748.

Ի 21-ն սեպտ. Սինոդն համեմատ եղբակացութեան Կոնսիստորիային Հայոց Վրաստանի հրամայեաց լուծանել զպսակ Արշակայ Գեշեանց, անդարձ աքսորելոյն ի Սիբիրիա, ընդ կնոջն Ովսաննայի, տալով վերջնոյս իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն ընդ առն այլում։ Վասն կատարման վճռոյս տալ հրաման Կոնսիստորիային Հայոց Վրաստանի, դարձուցանելով զգործն։ Հ. 764.

Ի 21-ն սեպտ. Սինոդն համեմատ եղբակացութեան Կոնսիստորիային Շամախւոյ հրամայեաց լուծանել զպսակ բնակչի Նորաշէն գեղջ Շուշւոյ գաւառի Սողոմոնի Սաղեանց ընդ կնոջն Աննայի Եարամիշեան, տալով առն իրաւունս նորոյ ամուսնութեան, իսկ կնոջն զկնի ենթարկելոյ եռամսեայ եկեղեցական ապաշխարանաց վասն լքանելոյ զօրինաւոր այրն՝ թոյլ տալ նմա ևս մտանել ի նոր ամուսնութիւն։ Վասն կատարման վճռոյս տալ հրաման Կոնսիստորիային Շամախւոյ։ Հ. 765.

Ի 21-ն սեպտ. Սինոդն առեալ ի նկատ, զի Մսերեանց ամուսինք՝ բնակիչք Բուռնաշէթ գեղջ թեմին Վրաստանի, ի բաղում ամաց հետէ անջատեալ ի միմեանց՝ կեան ուրոյն ուրոյն, և կինն Սրբուհի կենակցելով ապօրինաբար ընդ առն այլում՝ ծնեալ է զերիս զաւակունս, որոյ առիթ լեալ է այր նորին Անանիայն, ոչ ունելով մերձաւորութիւն ընդ կնոջն, ուստի լուծանել զպսակ Մսերեանց ամուսնոց, տալով առն իրաւունս նորոյ ամուսնութեան ընդ այլում, իսկ կնոջն Սրբուհւոյ նոյնպէս տալ իրաւունս նորոյ ամուսնութեան, նախապէս ենթարկելով զնա եռամսեայ եկեղեցական ապաշխարանաց։ Վասն կատարման վճռոյս տալ հրաման Կոնսիստորիային Հայոց Վրաստանի, դարձուցանելով զգործն։ Հ. 766.

Ի 26-ն սեպտ. Սինոդն համեմատ եղբակացութեան

Կոնսիստորիային Աստրախանի հրամայեաց լուծանել զպսակ բնակչի Ղզլար քաղաքի Յարութիւնի Մանուկեանց ընդ Շուշանայ Գրիգորեան, զրկելով զերկոսին ևս յիրաւանց նորոյ ամուսնութեան։ Վասն կատարման վճռոյս հանել հրաման Կոնսիստորիային Աստրախանի դարձուցանելով զգործն։ Հ. 779.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց հաստատել զեղբակացութիւն Կոնսիստորիային Ղարաբաղի, որ վասն անվաւեր համարելոյ զպսակ Կիրակոսի Զարգար Աւետեանց, բնակչի Նիժ գեղջ Նուխւոյ գաւառի, ընդ անչափահաս Մարիամու Գրիգորեանց ի գեղջէ Եաղուբլու նոյն գաւառի, մինչ ցհասանել կնոջն յարբունս հասակի և յանձնելոյ զպսակադիր Յովհաննէս քահաննէս Դալլաքեանց ի դատ մարմնաւոր իշխանութեան ի ձեռն պրոկուրորի Երջանական դատարանին Գանձակայ։ Վասն կատարման վճռոյս հանել հրաման Կոնսիստորիային Ղարաբաղի, դարձուցանելով զգործն։ Հ. 780.

Ց 3-ն հոկտ. Սինոդն հրամայեաց հաստատել զեղբակացութիւն Կոնսիստորիային Հայոց Ղարաբաղի, որ վասն անվաւեր համարելոյ զպսակ բնակչի Դաշբուլաղ գեղջ Առաքելի Վանեանց ընդ անչափահաս Մարգարտի Ոսկանեան մինչ ցհասանել վերջնոյս յարբունս հասակի և յանձնելոյ ի դատ քաղաքական իշխանութեան զպսակադիր եղիշէ քահանայն Տ. Յարութիւնեան ի ձեռն պրոկուրորի Երջանական դատարանին Գանձակայ։ Վասն կատարման վճռոյս հանել հրաման Կոնսիստորիային Ղարաբաղի, դարձուցանելով զգործն։ Հ. 788.

Ց 8-ն հոկտ. Սինոդն հրամայեաց հաստատել զեղբակացութիւն Կոնսիստորիային Երևանայ, որ վասն զրկելոյ զանչափահաս ապօրինի կենակիցս և զծնողս նոցա ի շնորհաց եկեղեցւոյ։ Զայսմանէ ծանուցանել Կոնսիստորիային Երևանայ։ Հ. 789.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց կարճել զգործ

լուծման պատկի բնակչաց Արտաշար գեղջ Էջմիածին գաւառի—Յակոբեան ամուսնոց վասն հաշտութեան նոցա, զորմէ և տալ գիտել ամուսնոցն ի ձեռն Կոնսիստորիային Երևանայ։ Հ. 790.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց. առեալ ի նկատ, զի բնակիչ Մեծ–Ղարաքիլիսա գեղջ Ալէքսանդրապոլ գաւառի Վասիլն Անանեանց զարդիս առողջացեալ՝ ընդունակ է ի կատարել զամուսնական պարտիս, վասնորոյ ըստ խնդրոյ կնոջն Սոփիայի կարճել զայս գործ ի Սինոդիս, զորմէ և տալ գիտել Անանեանց ամուսնոց ի ձեռն Կոնսիստորիային Երևանայ։ Հ. 791.

Ի նմին թուի Սինոդն համեմատ եղբակացութեան Կոնսիստորիային Նոր–Նախիջևանի և Բեսարաբիոյ հրամայեաց լուծանել զպսակ բնակչի Նոր–Նախիջևան քաղաքի Գէորգայ Բէյլէքեանց ընդ կնոջն Գայիանեայ Սուքիասեան, տալով առն իրաւունս նորոյ ամուսնութեան ընդ այլում։ Վասն կատարման վճռոյս հանել հրաման Կոնսիստորիային Բեսարաբիոյ, դարձուցանելով զգործն։ Հ. 792.

Ի 10-ն հոկտ. Սինոդն առեալ ի նկատ, զի ոչ գոյ օրինական հիմն ինչ լուծանելոյ զպսակ բնակչի Փռանսի գեղջ Շուշոյ գաւառի, վերաբնակեալ ի Մոսկուա, Սողոմոնի Լալայեանց ընդ կնոջն Բագդադայի Հասրաթեան, ուստի մերժել զինդիր Լալայեանցի վասն լուծման պսակին, զորմէ և տալ գիտել ամուսնոցն ի ձեռն Կոնսիստորիայի Ղարաբաղի։ Հ. 798.